Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 534 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 565- Ա
որոշման

«ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	«Սոս արևելքի քրիստոնյաներ» ֆրանսիական ոչ առևտրային կազմակերպությունը որոշել է վերազինել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանը նոր սև-սպիտակ տպիչ սարքավորումով, որպեսզի փակման վտանգի տակ կանգնած 250-ամյա տպարանը շարունակի իր գործունեությունն ու հրատարակվեն ավելի մեծ քանակով, ավելի մրցունակ ձևով, գիտական, հոգևոր և մշակութային աշխատանքներ, որոնք տարածվում են ամբողջ աշխարհում: Նախկին տպիչ սարքավորումը 50 տարվա է և անսարքության պատճառով լիովին չի օգտագործվում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Սոս արևելքի քրիստոնյաներ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ, (ՀՎՀՀ՝ 02835737, քաղ. Երևան, Նալբանդյան 7)
4.	Ծրագիրը կատարողը	«Սոս արևելքի քրիստոնյաներ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (ՀՎՀՀ՝ 02835737, քաղ. Երևան, Նալբանդյան 7)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է «Հայաստանյայց» առաքելական սուրբ եկեղեցի կրոնական կազմակերպության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանում, բնագավառը՝ հոգևոր:
6.	Ծրագրի բյուջեն	15,282,139 դրամ

7.	Բարեգործությունն ստացողը	«Հայաստանյայց» առաքելական սուրբ եկեղեցի կրոնական կազմակերպություն, (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Վաղարշապատ, ՀՎՀՀ՝ 04703401)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի հուլիսի 21-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել ստորև նշված սարքավորումները, որոնք տեղափոխվելու են Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի տարածք՝ 1) 2022 թվականի հուլիսից մինչև օգոստոսն ընկած ժամանակահատվածում սև-սպիտակ տպիչ սարքավորման ներմուծում՝ 24,000 եվրոյին համարժեք շուրջ 11,448,000 դրամ արժողությամբ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սարքավորման օգտագործման անվճար վերապատրաստում է տեղի ունենալու Heidelberg-ի մասնագետների կողմից. 2) 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2024 թվականի սեպտեմբեր 1-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է ներմուծել կազմարարական սարքավորում՝ 2,781 ԱՄՆ-ի դոլարին համարժեք շուրջ 1,079,473 դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը՝ 125,511 դրամ. 3) 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է ներմուծել կազմարարական սարքավորում՝ 4,480 ԱՄՆ-ի դոլարին համարժեք շուրջ 1,738,957 դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը ՝ 220,915 դրամ. 4) 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է ներմուծել կազմարարական սարքավորում՝ 1000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք շուրջ 388,160 դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը՝ 138,023 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է ներմուծել հետևյալ սարքավորումները՝ 1) տպիչ սարք – արժեքը՝ 24,000 եվրոյին համարժեք շուրջ 11,448,000 դրամ. 2) կազմարարական սարք - արժեքը՝ 2,781 ԱՄՆ-ի դոլարին համարժեք շուրջ 1,079,473 դրամ, փոխադրման ծախսերը՝ 125,511 դրամ. 3) կազմարարական սարք - արժեքը՝ 4,480 ԱՄՆ-ի դոլարին համարժեք շուրջ 1,738,957 դրամ, փոխադրման ծախսերը՝ 220,915 դրամ.

		4) կազմարարական սարք - արժեքը՝ 1000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք շուրջ 388,160 դրամ, փոխադրման ծախսերը՝ 138,023 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Տեղափոխման ծախսեր – տպիչ սարքավորման տեղափոխում Վրաստանից Հայաստան՝ 143,100 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի ընթացքում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

31.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ